

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի անցկացման սեմինարավար անհատ-խորհրդատուի մրցույթ

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի անցկացման սեմինարավար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

30 շահառուի համար կազմակերպվող և անցկացվող 64 ժամ տևողությամբ դասընթացի վարման համար՝

- ✓ Ուսումնասիրել համանման դասընթացների դասավանդման տեղական և միջազգային փորձը,

- ✓ ծրագրի ղեկավարի և համակարգողի հետ քննարկել և հաստատել դասընթացի մասնակիցների վերջնական ցուցակը, ապահովել իրազեկությունը սեմինարի անցկացման վայրի, ժամի մասին,
- ✓ իրականացնել «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի վարում՝ առաջնորդվելով «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի հայեցակարգային դրույթներով,
- ✓ դասընթացի ավարտին համակարգել ստացված գիտելիքները գործնականում կիրառելու գործընթացը («Follow up»-ը),
- ✓ իրականացնել ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ, գնահատումներ:

Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.

| № | Անվանումը | Պահանջը | Միավորը |
|----|-----------------------------|---|---------|
| 1. | Որակավորում | ✓ Համապատասխան ոլորտում մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ: | 20 |
| 2. | Ընդհանուր աշխատանքային փորձ | <ul style="list-style-type: none"> ✓ տեսական, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ վարելու աշխատանքային փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ, ✓ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու պրակտիկ աշխատանքային փորձը ցանկալի է, ✓ հեռաուսուցման համակարգին վերաբերող գիտելիքների տիրապետումը ցանկալի է: | 40 |
| 3. | Հատուկ աշխատանքային փորձ | ✓ մասնակցություն հեռաուսուցման որևէ դասընթացի, ինչպես նաև դրա ընթացիկ և ամփոփիչ ստուգումներին, | 40 |

| | | |
|------------------|---|------------|
| | <ul style="list-style-type: none"> ✓ հեռաուսուցման եղանակով դասավանդման առանձնահատկությունները ներկայացնող գրականության իմացություն, ✓ ներառական կրթության համակարգում նվազագույն պրակտիկ փորձը ցանկալի է, ✓ ռուսերենի և անգլերենի բավարար իմացությունը ցանկալի է: | |
| Ընդամենը՝ | | 100 |

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 3 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), shirakhovhannisyan@mail.ru, հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00 ներառյալ:

ՀՀ ԿԳՆ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ _____ / _____ /

(ստորագրություն)

«____» _____ 2018 թ.